

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԿՈԼԵԳԻԱ

## ՈՐՈՇՈՒՄ

24 ապրիլի 2013 թվականի

**թիվ 98**

քաղ. Մոսկվա

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ «Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ համաձայնագրի նախագծի մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Ընդունելով ի գիտություն «Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների մասին համաձայնագրի» նախագծի մշակման ընթացքի վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային համագործակցության հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Վ. Ա. Գոշինի տրամադրած տեղեկատվությունը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

Հիմնականում հավանություն տալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ «Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների մասին համաձայնագրի նախագծի մասին» որոշման

Նախագծին (կից ներկայացվում է) եւ այն քննարկման ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստում:

Նախագահ՝

Վ. Բ. Խրիստենկո

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագիծ

## ՈՐՈՇՈՒՄ

«\_\_\_»\_\_\_\_\_ 2013 թվականի

թիվ

քաղ. Մոսկվա

**Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ համաձայնագրի նախագծի մասին**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հավանություն տալ «Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների մասին» կից ներկայացվող համաձայնագրի նախագծին՝ հաշվի առնելով, որ դրանում ամրագրման են ենթակա դրույթներ, որոնցով սահմանվում են՝

ա) Մաքսային միության միասնական մաքսային տարածքում ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների փոխադրումներ իրականացնելու հնարավորություն, եթե այդ փոխադրումներն սկսվում են Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մեկ անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) տարածքում եւ ավարտվում են մեկ այլ անդամ պետության տարածքում՝ առանց Մաքսային միության մաքսային սահմանը հատելու.

բ) այն դեպքերն ու պայմանները, որոնց դեպքում Համաձայնագրով նախատեսված ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի համար տոկոսի (տույժերի) վճարման պատասխանատվությունը մեկ անդամ պետության երաշխիքային միավորումից անցնում է մեկ այլ անդամ պետության երաշխիքային միավորմանը:

2. Սույն Որոշման 1-ին կետում նշված Համաձայնագրի նախագիծն ուղարկել անդամ պետությունների կառավարություններ՝ այն ստորագրելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն իրականացնելու համար:

3. Խնդրել անդամ պետություններին՝ սույն Որոշման 2-րդ կետում նշված ներպետական ընթացակարգերի իրականացումն ավարտել մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ը:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

**Բելառուսի  
Հանրապետությունից**

**Ղազախստանի  
Հանրապետությունից**

**Ռուսաստանի  
Դաշնությունից**

**Ս. Ռումաս**

**Կ. Կելիմբետով**

**Ի. Շուվալով**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունների մասին**

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով, որ Կողմերի պետությունները «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայի (այսուհետ՝ ՄՃՓ կոնվենցիա) Պայմանավորվող կողմերն են,

դեկավարվելով ՄՃՓ կոնվենցիայի դրույթներով, այդ թվում՝ 48-րդ եւ 49-րդ հոդվածներով, որոնցով չի բացառվում մաքսային կամ տնտեսական միություն կազմող՝ ՄՃՓ կոնվենցիայի Պայմանավորվող կողմերի՝ այն փոխադրումների նկատմամբ հատուկ կանոններ եւ մեծ արտոնություններ կիրառելու իրավունքները, որոնց ուղարկման կամ նշանակման վայրն են նրանց տարածքները կամ այն փոխադրումների նկատմամբ, որոնք իրականացվում են նրանց տարածքով՝ տարանցմամբ,

ձգտելով Մաքսային միության միասնական մաքսային տարածքում (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) կիրառել ՄՃՓ փոխադրումների նկատմամբ այնպիսի կանոններ, որոնք չեն սահմանափակի

ՄՃՓ կոնվենցիայով նախատեսված արտոնությունները, չեն խոչընդոտի ՄՃՓ կոնվենցիայի դրույթների կիրառումը եւ ՄՃՓ գրքույկի տիրոջ համար չեն սահմանի որեւէ լրացուցիչ ձեւականություններ եւ պահանջներ,

Մաքսային միության մաքսային տարածքում մաքսային գործառնությունների իրականացումը պարզեցնելու եւ ՄՃՓ կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունները սահմանելու նպատակով

համաձայնեցին հետեւյալի մասին.

### Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվող հասկացություններն ունեն ՄՃՓ կոնվենցիայով եւ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված իմաստները, եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

Հասկացությունների՝ ՄՃՓ կոնվենցիայով եւ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված իմաստների միջեւ տարաձայնությունների դեպքում հասկացություններն օգտագործվում են ՄՃՓ կոնվենցիայով սահմանված իմաստներով:

### Հոդված 2

1. Կողմերի պետությունների մաքսային մարմինները մաքսային հսկողության տակ գտնվող, ՄՃՓ գրքույկի կիրառմամբ տեղափոխվող ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) նկատմամբ մաքսային գործառնություններ կատարելիս եւ մաքսային հսկողություն իրականացնելիս ղեկավարվում են ՄՃՓ կոնվենցիայի դրույթներով, Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ Կողմերի պետությունների օրենսդրությամբ:

2. Մաքսային միության մաքսային տարածքով ապրանքների փոխադրումը ՄՃՓ գրքույկի կիրառմամբ թույլատրվում է այն դեպքերում, երբ այդ փոխադրումը՝

ա) սկսվում եւ (կամ) ավարտվում է Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս.

բ) սկսվում եւ ավարտվում է Մաքսային միության մաքսային տարածքում եւ իրականացվում է Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետության տարածքով.

գ) սկսվում է մեկ Կողմի պետության տարածքում եւ ավարտվում է մյուս Կողմի պետության տարածքում՝ առանց Մաքսային միության մաքսային սահմանը հատելու:

### Հոդված 3

1. ՄՃՓ կոնվենցիայի եւ սույն Համաձայնագրի պահանջներին համապատասխան ձեւակերպված ՄՃՓ գրքույկը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան Մաքսային միության մաքսային տարածքով ապրանքներ տեղափոխելիս կարող է օգտագործվել որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իրավունք ունի սահմանելու ՄՃՓ գրքույկի կիրառման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման առանձնահատկություններ, այդ թվում՝ այն լրացնելու մասով:

ՄՃՓ գրքույկը տրանսպորտային միջոցների եւ այդ տրանսպորտային միջոցներով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաեւ դրանց վերաբերող տրանսպորտային (փոխադրման) եւ առեւտրային փաստաթղթերի հետ ՄՃՓ գրքույկի տիրոջ կողմից ներկայացվում (տրամադրվում) է Կողմերի

պետությունների մաքսային մարմիններին՝ մաքսային գործառնությունները կատարելու եւ մաքսային հսկողություն իրականացնելու համար:

2. Կողմերի պետությունների մաքսային մարմինների կողմից ձեւակերպվում են ՄՃՓ գրքույկի 2 պոկովի թերթիկները՝

ուղարկման վայրի մաքսատան կամ միջանկյալ մաքսատան կողմից, որով ապրանքները ներմուծվում են Մաքսային միության մաքսային տարածք, ձեւակերպվում է թիվ 1 պոկովի (սպիտակ) թերթիկը.

միջանկյալ մաքսատան, որով ապրանքները արտահանվում են Մաքսային միության մաքսային տարածքից, կամ նշանակման վայրի մաքսատան կողմից ձեւակերպվում է թիվ 2 պոկովի (կանաչ) թերթիկը:

Մաքսային միության մաքսային տարածքում ուղարկման վայրի կամ նշանակման վայրի մի քանի մաքսատների առկայության դեպքում մեկ ՄՃՓ գրքույկի կիրառմամբ ապրանքների փոխադրման դեպքում յուրաքանչյուր մաքսատան համար ձեւակերպվում է ՄՃՓ գրքույկի պոկովի թերթիկների առանձին զույգ:

3. Կողմերի պետությունների մաքսային մարմինները տեղեկատվություն (էլեկտրոնային տարբերակով տվյալներ) են փոխանակում ՄՃՓ գործառնությունը սկսելու եւ դադարեցնելու մասին՝ տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, ինչպես նաեւ այդպիսի համակարգեր եւ տեխնոլոգիաներ են օգտագործում ՄՃՓ կոնվենցիայի 10-րդ հավելվածի դրույթների իրականացման նպատակներով:

Սույն Համաձայնագրի նպատակներով «ՄՃՓ գործառնություն» ասելով պետք է հասկանալ ՄՃՓ փոխադրման այն հատվածը, որն իրականացվում է Մաքսային միության մաքսային տարածքով ուղարկման վայրի կամ մուտքի մաքսատնից (միջանկյալ մաքսատնից) մինչեւ նշանակման վայրի կամ ելքի մաքսատուն (միջանկյալ մաքսատուն):



4. Կողմերի պետությունների մաքսային մարմինների միջև ՄՃՓ գործույկների պոկովի թերթիկների առաքումն իրականացվում է միայն մաքսային մարմիններից մեկի կողմից համապատասխան գրավոր եւ (կամ) էլեկտրոնային տարբերակով կատարված հարցման հիման վրա, այդ թվում՝ ՄՃՓ ընթացակարգի խախտման դեպքում:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան ստացված տեղեկատվության (էլեկտրոնային տարբերակով տվյալների) եւ ՄՃՓ գործույկում նշված տվյալների միջև տարաձայնությունների առկայության դեպքում, գերակայում են վերջինները:

#### Հոդված 4

Մաքսային միության մաքսային տարածքում ՄՃՓ գործառնությունն ավարտվելու փաստի նկատմամբ հսկողությունն իրականացվում է ուղարկման վայրի մաքսատան կամ միջանկյալ մաքսատան կողմից, որում սկսվել է ՄՃՓ գործառնությունը՝ նշանակման վայրի մաքսատան կամ միջանկյալ մաքսատան կողմից ստացված տեղեկատվության (էլեկտրոնային տարբերակով տվյալների) հիման վրա:

Սույն Համաձայնագրի նպատակներով «ՄՃՓ գործառնության ավարտ» ասելով պետք է հասկանալ Կողմերից մեկի պետության մաքսային մարմնի կողմից ՄՃՓ գործառնության պատշաճ դադարեցման փաստի ճանաչումը, որը սահմանվում է նշանակման վայրի կամ ելքի մաքսատան (միջանկյալ մաքսատան) տրամադրության տակ եղած տեղեկատվության (էլեկտրոնային տարբերակով տվյալների) ուղարկման կամ մուտքի վայրի մաքսատան տրամադրության տակ եղած տեղեկատվության (էլեկտրոնային տարբերակով տվյալների) հետ համադրման հիման վրա:

#### Հոդված 5

1. ՄՃՓ կոնվենցիայի եւ սույն Համաձայնագրի պահանջներին համապատասխան ձեւակերպված ՄՃՓ գրքույկը, որը ներկայացվել է Կողմերից մեկի պետության մաքսային մարմին, հաստատում է այդ պետության երաշխիքային միավորման կողմից՝ փոխադրվող ապրանքների համար ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) գումարների վճարման երաշխիքի տրամադրումը:

2. Կողմերի պետություններում սահմանվում է այն գումարների առավելագույն հավասար չափ, որոնց վճարումը կարելի է պահանջել ՄՃՓ մեկ գրքույկով՝ ՄՃՓ կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա երաշխիքային միավորման կողմից 60 000 եվրոյից ոչ պակաս գումարի չափով տրամադրված երաշխիքին համապատասխան:

#### Հոդված 6

1. ՄՃՓ կոնվենցիայի խախտման դեպքում, որի հետեւանքով Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան սկսվում է ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների վճարման ժամկետը (այսուհետ՝ ՄՃՓ կոնվենցիայի խախտում), երաշխիքային միավորումն այն Կողմի պետության մաքսային մարմինների նկատմամբ, որտեղ այն հիմնադրված է, ՄՃՓ կոնվենցիայի եւ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, ներմուծման կամ արտահանման տուրքերը եւ հավաքագրումները, ինչպես նաեւ կետանցի դիմաց տոկոսները (տույժերը) վճարելու պատասխանատվություն է կրում:

2. Ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) վճարման պատասխանատվությունն առաջանում է այն Կողմի պետության երաշխիքային միավորման մոտ, որի տարածքում սկսվում է ՄՃՓ գործառնությունը, եւ ի հայտ է գալիս այդ

պետության մաքսային մարմնի կողմից ՄՃՓ գրքույկը որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր գրանցելու պահից:

Այն դեպքում, երբ պարզվում (հաստատվում) է, որ ՄՃՓ կոնվենցիայի խախտումը կատարվել է ոչ սույն կետի առաջին պարբերության մեջ նշված Կողմի պետության տարածքում, ապա ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) վճարման պատասխանատվությունն անցնում է այն պետության երաշխիքային միավորմանը, որի տարածքում կատարվել է այդ խախտումը: Կողմերից մեկի պետության տարածքում ՄՃՓ կոնվենցիայի խախտում կատարելը հաստատվում է ՄՃՓ գրքույկում ներկայացված եւ ՄՃՓ կոնվենցիային համապատասխան ձեւակերպված արձանագրությամբ կամ պարզվում է այդ պետության մաքսային եւ (կամ) այլ լիազորված մարմինների կողմից իրականացվող վարչական վարույթի, քրեական գործերով քննության կամ ստուգման ընթացքում:

Այն դեպքում, երբ Կողմի պետությունը, որի տարածքում կատարվել է ՄՃՓ կոնվենցիայի խախտումը, չի պարզվել (հաստատվել), կիրառվում են սույն կետի առաջին պարբերության դրույթները:

3. ՄՃՓ գործառնությունը չավարտվելու դեպքում համապատասխան ծանուցում է ուղարկվում այն Կողմի պետության երաշխիքային միավորմանը, որի տարածքից սկսվել է ՄՃՓ գործառնությունը: Այդ ծանուցումը համարվում է բոլոր Կողմերի պետությունների երաշխիքային միավորումների միաժամանակ ծանուցում:

Սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքում ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) վճարման պահանջը՝ ՄՃՓ կոնվենցիայի 11-րդ հոդվածին համապատասխան, ներկայացվում է այն երաշխիքային միավորմանը, որին, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, անցել է դրանք վճարելու

պատասխանատվությունը եւ այն Կողմի պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ հիմնադրված է այդ երաշխիքային միավորումը:

## Հոդված 7

1. ՄՃՓ գրքույկի կիրառմամբ տեղափոխվող ապրանքների համար ներմուծման կամ արտահանման տուրքերը եւ հավաքագրումները, կետանցի դիմաց տոկոսները (տույժերը) վճարվում են այն Կողմի պետությունում, որի տարածքում սկսվել է ՄՃՓ գործառնությունը կամ որի տարածքում կատարվել է ՄՃՓ կոնվենցիայի խախտումը, այն դեպքում, երբ տվյալ փաստը պարզվել (հաստատվել) է սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան:

2. Ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) բռնագանձումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ ՄՃՓ կոնվենցիային համապատասխան՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները հաշվի առնելով:

Ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) բռնագանձումն իրականացվում է այն Կողմի պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում սկսվել է ՄՃՓ գործառնությունը, իսկ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքում՝ այն Կողմի պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում կատարվել է ՄՃՓ կոնվենցիայի խախտումը:

3. Ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) բռնագանձման նպատակներով այն Կողմի պետության մաքսային մարմինը, որի տարածքում սկսվել է ՄՃՓ գործառնությունը, ներմուծման կամ արտահանման տուրքերի եւ հավաքագրումների, կետանցի դիմաց տոկոսների (տույժերի) բռնագանձման

համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները փոխանցում է այն Կողմի պետության մաքսային մարմին, որի տարածքում կատարվել է ՄՃՓ կոնվենցիայի խախտումը: Փաստաթղթերի եւ տվյալների ցանկը, դրանք փոխանցելու ժամկետները եւ կարգը սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ:

#### Հոդված 8

1. Կողմերից մեկի պետության մաքսային մարմնի կողմից ՄՃՓ կոնվենցիայի 38-րդ հոդվածին համապատասխան կայացված՝ ՄՃՓ գրքուկի տիրոջը ՄՃՓ կոնվենցիայի դրույթներից օգտվելու իրավունքից զրկելու մասին որոշումը գործում է Մաքսային միության ամբողջ մաքսային տարածքում:

2. ՄՃՓ գրքուկի տիրոջը ՄՃՓ կոնվենցիայի դրույթներից օգտվելու իրավունքից զրկելու մասին որոշում կայացրած Կողմի պետության մաքսային մարմինն այդ որոշման մասին եւ այն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին տեղեկատվությունն ուղարկում է մյուս Կողմերի պետությունների մաքսային մարմիններին, ինչպես նաեւ այլ մարմիններ եւ անձանց՝ ՄՃՓ կոնվենցիայի 38-րդ հոդվածին համապատասխան:

3. Կողմերի պետությունների մաքսային մարմինները ՄՃՓ կոնվենցիայի դրույթներից օգտվելու իրավունքից զրկված փոխադրողների մասին տեղեկատվության փոխանակումն իրականացնում են տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

#### Հոդված 9

1. ՄՃՓ գրքուկի կիրառմամբ ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների ուղեկցման մասին որոշումը կայացվում է Կողմերի պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ՄՃՓ կոնվենցիայի եւ Մաքսային միության

մաքսային օրենսդրության դրույթների հիման վրա՝ ռիսկերի կառավարման համակարգի օգտագործմամբ:

2. ՄՃՓ գրքույկի կիրառմամբ ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների ուղեկցման մասին որոշումը կայացնելիս այն Կողմի պետության մաքսային մարմինը, որի տարածքում սկսվում է ՄՃՓ գործառնությունը, մյուս Կողմի պետության տարածքում կամ տարածքով ապրանքների շարժի դեպքում ՄՃՓ գրքույկում՝ բացի նշանակման վայրի մաքսային մարմնից, նշում է այն կետը, որտեղ իրականացվելու է այն ուղեկցվող տրանսպորտային միջոցների ընդունում-հանձնումը, որոնք ՄՃՓ գրքույկի կիրառմամբ ապրանքներ են փոխադրում: Ուղեկցման մասին որոշում կայացրած Կողմի պետության մաքսային մարմինը փոխադրողի խնդրանքով ՄՃՓ գրքույկում նշում է այդ ուղեկցման պատճառը:

#### Հոդված 10

1. Կողմերի պետությունների մաքսային մարմինների՝ սույն Համաձայնագրի իրականացման առնչությամբ տեղեկատվական փոխգործողությունն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Ապրանքները չառաքելու մասին տեղեկատվության (տվյալների) ստացման կամ դրանց առաքման մասին տեղեկատվության (տվյալների) բացակայության դեպքում կողմերի պետությունների մաքսային մարմինների գործողությունների կարգը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

#### Հոդված 11

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

2. Այն դեպքում, երբ Կողմերը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված՝ դրանք անցկացնելու մասին գրավոր խնդրանք ներկայացնելու ամսաթվից՝ 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի լուծման եղանակի վերաբերյալ Կողմերի միջև որեւէ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Կողմերից յուրաքանչյուրն այդ վեճը կարող է հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

3. Հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

## Հոդված 12

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են դրա անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

## Հոդված 13

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է դրա ստորագրման ամսաթվից 60 օրացուցային օրը լրանալուց հետո:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր  
ծանուցումն ստանալու ամսաթվից:

Կատարված է \_\_\_\_\_ ում, 201\_ թվականի \_\_\_\_\_ «\_\_\_»-ին, մեկ  
բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Հանձնաժողովում, որը,  
որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի  
դրա հաստատված պատճենը:

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
Կառավարության կողմից	Կառավարության կողմից	Կառավարության կողմից